ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 16

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 4-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Ք. Երևան

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ նիստ) կայացավ 2022թ. մարտի 4-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրաելյան	Կոմիտեի անդամ
Արման Ալաբերքյան	Կոմիտեի անդամ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 5-ը, հետևաբար, ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 համաձայն Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի անդամ, քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածի 4.01, 4.02 կետերով, 5-րդ հոդվածի 5.01 կետով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածի 21.04 կետով, 28-րդ հոդվածի 28.01 կետով, օրակարգում ներառված հարցի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումը.

1. **«Արարատի Արաքս» - «Լոգիկոն» (ՖՁԲԽ065) հանդիպմանը «Արարատի Արաքս» թիմի կազմում որակազրկված ֆուբոլիստ Ռազմիկ Ավանեսյանի (N6445) մասնակցության վերաբերյալ**

Կոմիտեն՝ 5 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

Հիմք ընդունելով 04.03.2022թ.-ին ՀՖՖ Ֆուտզալի բաժնի պետ Ա. Նազարեթյանից ստացած գրությունը՝ հաստատված համարել «Արարատի Արաքս» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 48-րդ հոդվածի 20-րդ կետով՝ «Արարատի Արաքս» թիմին գրանցել 0:5 հաշվով տեխնիկական պարտություն, «Արարատի Արաքս» ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20. 000 ՀՀ դրամի չափով:

Հիշեցում՝

1. **Հոդված 19. Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկումը**

   Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումները ֆուտբոլային սուբյեկտների կողմից կարող են բողոքարկվել ՀՖՖ Բողոքարկման կոմիտե՝ որոշման մասին պաշտոնական հրապարակման պահից 7 (յոթ) օրվա ընթացքում, իսկ այդ դեպքում, երբ ֆուտբոլային սուբյեկտը դիմել է գործի հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 7-օրյա ժամկետը սկսում է հոսել այդ հիմքերը ստանալու պահից:

2. **Հոդված 28. Պատասխանատվության միջոցի կիրառման ընդհանուր սկզբունքները**

   28.05 Սույն կանոնակարգում ներառված՝ ֆուտբոլիստի և/կամ թիմի անձնակազմի անդամի ստացած դեղին քարտերի հետ կապված որակազրկումները (սույն կանոնակարգի 41- րդ, 45-րդ, 47-րդ և 49-րդ հոդվածների 1-ից 13-րդ կետերը) կիրառվում են առանց ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշման:

3. **Հոդված 25. Ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի և ակումբի պաշտոնյաների պատասխանատվությունը**

   25.20 Ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի, ակումբի պաշտոնյայի սույն կանոնակարգի 41- րդ, 45-րդ, 47-րդ և 49-րդ հոդվածների 1-ից 13-րդ կետերով սահմանված խախտումների հաշվառումը կատարում է համապատասխան ակումբը՝ առանց ՀՖՖ-ի Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշման:
   25.21 25.20 կետի պահանջները ակումբի կողմից չպահպանելը հանգեցնում է այդ ակումբի նկատմամբ կարգապահական պատժամիջոցի՝ տեխնիկական պարտություն:

4. Հոդված 44-ի և 45-ի կիրառվող պատժամիջոցների տուգանքները սահմանված են ՀՀ Մ-18-16 առաջնություններին մասնակցող ֆուտբոլիստների համար: Մ-15 և ցածր տարիքային խմբերի առաջնություններին մասնակցող ֆուտբոլիստների տուգանքները և պատժամիջոցները սահմանված են նախորդի 50%-ի չափով: Հոդված 44-ի և 45-ի կիրառվող պատժամիջոցները սահմանվում են նաև ՀՀ Սիրողական ֆուտբոլի առաջնություններին մասնակցող սուբյեկտների համար: